

**ՅԱԶԼՈՎԵՑ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 1648-1669 ԹԹ.
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆԸ. ՆՈՐԱՀԱՅՑ
ՄԻ ԱՂԲՅՈՒՐ ԼԵՀԱՍՏԱՆԻՑ**

Բանալի բառեր՝ Կրակովի Ազգային արխիվ, Լեհ-լիտվական թագավորություն, 17-րդ դար, Յազլովեց, հայկական դատարան, դատական արձանագրություններ, հայատառ լեհերեն, հայատառ ղփչաղերեն, հրեաներ:

2015 թ. Լեհաստանի Կրակով քաղաքի Յագելոնյան համալսարանում պաշտպանեցինք մեր գիտական ատենախոսությունը՝ նվիրված Լեհական, իսկ 16-րդ դարից՝ Լեհ-լիտվական միացյալ թագավորությունում¹ 14-18-րդ դարերի ընթացքում ստեղծված հայալեզու ձեռագրական ժառանգությանը²: Աշխատության մեջ Լեհաստանում վերջերս հայտնաբերված հայագիտական բնույթի աղբյուրների թվում հակիրճ գրությամբ տեղեկացրել էինք Յազլովեց քաղաքի հայկական դատարանի 1648-1669 թթ. արձանագրությունների մատյանի մասին: Աղբյուրը, որը պատահաբար հայտաբերվել էր Կրակովի Ազգային արխիվում, անձամբ ուսումնասիրելու հնարավորություն չէինք ունեցել: Իրա գոյության մասին տեղեկացել էինք Լեհահայ համայնքի պատմության բազմամյա ուսումնասիրող, Յագելոնյան համալսարանի պրոֆեսոր Քշիշտոֆ Ստոպկայի

¹ Հայ իրականությանը, մասնագիտական գրականության մեջ Լեհ-լիտվական միացյալ թագավորությունը, որը գոյություն է ունեցել 16—18-րդ դարերի ընթացքում, առավել հայտնի է Ռեչ Պոսպոլիտա անվամբ, որը լատ. Res publica (հանրության, ընդհանուր գործ) արտահայտության լեհերեն (Rzeczpospolita՝ rzecz-գործ, pospolita-ընդհանուր) համարժեքն է:

² Ատենախոսության պաշտպանությունից հետո պարզվեց, որ Յագելոնյան համալսարանի՝ 650 տարուց ավել գոյության պատմության մեջ առաջին հայտնիին ենք, որն արժանացել է գիտական այդ կոչմանը:

շնորհիվ: Միայն 2017 թ. առիթ ստեղծվեց մեկնելու Կրակով և անձամբ ուսումնասիրելու աղբյուրը³: Սույն հոդվածի շրջանակներում նպատակ ունենք ընթերցողին ծանոթացնելու մեր նախնական ուսումնասիրության արդյունքներին:

Յազլովեցի (ներկայումս գյուղ Ուկրաինայի արևմտյան շրջանում) հայկական համայնքին առնչվող մեր աղբյուրները սուղ են⁴. դրանք հիմնականում կրոնական բովանդակության մոտ մեկ տասնյակ ձեռագրեր են՝ հիշատակարանային բնույթի համեստ տեղեկություններով⁵: Թերևս միակ բացառությունը Յազլովեցի հայկական երիտասարդական կազմակերպության, այսպես կոչված կտրիճների եղբայրության 1658 թ. կանոնադրությունն է: Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում պահվող, ընդամենը յոթ թերթից բաղկացած, պատմական մեծ կարևորություն ունեցող այդ աղբյուրը դեռևս 1973 թ.-ին հրատարակել է Լեհ-լիտվական թագավորության հայ համայնքի պատմությանը նվիրված բազմաթիվ աշխատությունների հեղինակ, Մատենադարանի երբեմնի փոխտնօրեն Վարդան Գրիգորյանը⁶: Այս առումով հասկանալի է 256 թերթ (512 էջ) պարունակող յազլովեցյան նորահայտ աղբյուրի կարևորությունն ու պատմական նշանակությունը, մանավանդ որ

³ Նման հնարավորություն ստացանք Կրակովի Մշակույթի միջազգային կենտրոնի *Thesaurus Poloniae* կրթամշակույթի շնորհիվ: «Յազլովեցի ֆաղափի հայկական դատարանի 1648-1669 թթ. արձանագրությունների մատյանը որպես Լեհ-լիտվական թագավորության պատմության կարևոր աղբյուր» խորագրով մեր թեման աշխարհի տարբեր երկրներից ուղարկված հինգ տասնյակից ավել հայտերի շարժում էր, որն ընտրվեց հանձնաժողովի կողմից (տե՛ս <http://mck.krakow.pl/programme-editions>):

⁴ Տե՛ս Վ. Ռ. Գրիգորյան, «Յազլովեցի ֆաղափի հայ գաղթօջախը (Համառոտ պատմություն)», ՊԲՀ, 1973, 3, էջ 52-70: Յազլովեցի վերաբերյալ բազմաթիվ վկայություններ կան Քշիշտոֆ Ստոպկայի և Անդժեյ Փիենբայի հեղինակած «Հայոց Լեհաստանը» խորագրով լեհերեն աշխատության մեջ, տես՝ *K. Stopka, A. Zięba, Ormiańska Polska*, Warszawa, 2018 (տե՛ս աշխատությանը առանձին գրքով կցված անձնանունների և տեղանունների ցանկը, „Jazłowiec” բառի տակ, էջ 34):

⁵ Յազլովեցի հետ առնչություն ունեցող հայկական ձեռագրերի մասին տե՛ս Վ. Ռ. Գրիգորյան, «Յազլովեցի ֆաղափի հայ գաղթօջախը...», էջ 64-65: Յազլովեցում 1618 թ. ընդօրինակված, ներկայումս ՄՄ 9655 ձեռագրի մասին տե՛ս Փ. Մնացականյան, *Լեհահայեր. Ձեռագրական ժառանգություն. Կազմվել է Մատենադարանի ձեռագիր հավաքածուների հիման վրա. կովում հայկական թեմի հիմնադրման 650-ամյակի (1367-2017) առթիվ*, Երևան 2017, էջ 80, 115: Ձեռագրի մանրանկարները տե՛ս էջ 118-123, կազմի նկարը տե՛ս էջ 110-111:

⁶ Վ. Ռ. Գրիգորյան, «Յազլովեցի ֆաղափի հայկական գաղութի «Վտրինվորաց եղբայրության» կանոնադրությունը», *ԼՀԳ*, 1973, 9, էջ 40-60: Ձեռագրի տիպոգրաֆերը տես *K. Stopka, A. Zięba, Ormiańska Polska*, էջ 138:

այն Յազլովեցի հայ համայնքում ստեղծված, մինչ այժմ մեզ հայտնի հայերեն հնագույն դատական մատյանն է⁷:

Մատյանի արտաքին նկարագրությունը

Յազլովեցի հայկական դատարանի 1648-1669 թթ. արձանագրությունների մատյանը պահվում է Կրակովի Ազգային արխիվում (այսուհետև՝ ԿԱ), գույքահամար *Podh II 165*: Բաց շագանակագույն կաշեպատ գիրք է՝ ոսկեզօծ զարդանախշերով: Կազմի Ա երեսի կենտրոնում երևում է Լեհական Լյուբոմիրսկի իշխանական ընտանիքի զինանշանի ոսկեզօծ կնիքը: Ձախ անկյունի վերևում փակցված քառակուսի թղթի վրա մատյանի գույքահամարն է և Կրակովի Ազգային արխիվի անվանումը Լեհերենով՝ «*Archiwum Państwowe w Krakowie Podh II 165*»: Կազմի Բ երեսի կենտրոնում Լեհ իշխան Ալեքսանդր Դոմինիկ Լյուբոմիրսկու (1693-1720) ոսկեզօծ գրքանիշն է՝ կենտրոնում՝ շրջանակի մեջ առնված «*DE LA BIBLIOTHEQUE DE MR. LE PR. ALEXANDRE LUBOMIRSKI*» գրությունը: Կազմի թիկունքին կան հորիզոնական ոսկեզօծ գծեր: Վերևի հատվածում փակցված թղթե պատառիկի վրա երևում է ձեռագիր գրված «10» թվանշանը: Դրանից ներքև՝ քառակուսի թղթե պատառիկի վրա դրոշմված է «*MANUSCRIPT 1648*» ոսկեզօծ գրությունը, ներքևում ձեռագիր ավելացրած՝ «*Ormiański*» գրությունը: Կենտրոնում ոսկեզօծ դրոշմագիր «*W*» տառն է: Ստորին հատվածում՝ քառակուսի թղթե պատառիկի վրա դրոշմված է «*G 15.*» ոսկեզօծ գրությունը: Ձեռագրի մեծությունն է՝ 31x19: Թերթերի քանակը՝ 256/512 էջ: Ձեռագիրն ունի տարատեսակ լուսադրոշմներ: Վիճակը՝ լավ:

⁷ Մինչ այժմ հայտնի էին Յազլովեցի հայ համայնքում ստեղծված, պատմական կարևոր ժամանակահատված՝ 1669-1672 թթ. ընդգրկող, լեհերեն գրված դատական արձանագրությունները: Դրանց հղումներ և դրանցից ընդարձակ ֆաղվածքներ է արել 19-րդ դարի լեհահայ գործիչ, դոմինիկյան միաբանության անդամ Սադոկ Բարոնշը (1814-1892) իր «Յազլովեցյան հուշեր» խորագրով լեհերեն աշխատության մեջ, տե՛ս *Pamiętki Jazłowieckie, zebrał x. Sadok Barącz Zakonu Kaznodziejskiego*, Lwów, 1862, էջ 110-117: Սադոկ Բարոնշի մասին տե՛ս Ռ. Համբարձումյան, *Սադոկ Բարոնշը Լեհահայոց պատմության ուսումնասիրող*, Երևան 1998: Տե՛ս նաև Վ. Ռ. Գրիգորյան, «Յազլովեց ֆաղափի հայ գաղթօջախը...», էջ 60:

Արձանագրությունների բովանդակությունը

Լեհական թագավորությունում գործող հայկական ինքնավար մարմինների գործառույթներից ամենակարևորը դատական իշխանության իրականացումն էր⁸: Յազլովեցի հայկական դատարանի արձանագրությունները վերաբերում են տվյալ դատարանի իրավասության ներքո գտնվող տարաբնույթ հարցերի: Դրանք գլխավորապես քաղաքացիական բնույթի գործեր են, քանզի քրեական հարցերով դատավարությունը գտնվում էր լեհական դատարանների իրավասության ներքո:

Յազլովեցյան արձանագրությունները վերաբերում են սեփականության, գույքային իրավունքի հարցերի (առուծախ, վարձակալություն, ժառանգում), ստանձնած ինչ-ինչ պարտավորությունների կատարմանը կամ դրանց խախտմանը (որևիցե իրի պատրաստում, նորոգում, մատակարարում), մանր խուլիգանությանը (ծեծ, հայհոյանք), գումարային հարցերի (պարտք վերցնել, պարտքը ժամանակին չվերադարձնել), կտակների կազմմանը, գրօրենքների՝ ամուսնության նոտարական դաշնագրերի կնքմանը: Դատական գործերում մեծ թիվ են կազմում մի շարք տոնավաճառների, գլխավորապես յազլովեցյան ամենամյա տոնավաճառի մասին հիշատակությունները, որոնք ոչ միայն տնտեսական գործարքներ կնքելու առիթ էին դրանց մասնակից Լեհ-լիտվական թագավորության հպատակների և օտարերկրյա քաղաքացիների համար, այլ նաև հնարավորություն էին տալիս պարտապաններին մարելու իրենց պարտքերը: Հաճախ առևտրականները լրացուցիչ ժամանակ էին խնդրում դատարանից գումարը վերադարձնելու համար՝ հիմնավորելով դա այն հանգամանքով, որ առևտրի համար անհաջող տարիներ են եղել: Խոսքը 1648-1654 թթ. ընթացքում Լեհ-լիտվական թագավորության դեմ Զապոռոժիե նահանգի հեթման Բոգդան Խմելնիցկու գլխավորած կոզակական ապստամբության մասին է, որի պատճառով շատ ճանապարհներ վտանգավոր էին դարձել առևտրական քարավանների համար: Փաստորեն, յազլովեցյան արձանագրությունների՝ գիտական շրջանառության մեջ դնելը մի լրացուցիչ աղբյուր կհանդիսանա ուսումնասիրելու, թե ինչպես էր ընթանում թագավորության տվյալ հատվածի հայ համայնքի կյանքը ապստամբության անբարենպաստ տարիներին:

⁸ Ռեչ Պոսպոլիտայում հայկական ինֆանվար մարմինների իրավասության ներքո գտնվող հիմնական գործառույթների մասին մանրամասն տե՛ս Մ. Լ. Հովհաննիսյան, Ուրվագծեր Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմության, Երևան 1977, էջ 113-139:

Գատական արձանագրություններում հիշատակվում են հայ և օտարազգի հպատակներ՝ առևտրականներ ու արհեստավորներ Լեհ-լիտվական թագավորությունից (Լվով, Կամենեց, Ջամոչչ, Բրոդի), նրա անմիջական հարևան պետություններից՝ Մոլդավիայից, Վալախիայից (Սուչավա, Սերաթ), Օսմանյան կայսրությունից (Անկարա, էդիրնե, Ստամբուլ, Հալեպ), հատկապես կայսրության տիրապետության տակ գտնվող բուն հայկական տարբեր շրջաններից (Բիթլիս, Սեբաստիա, Բաբերդ, Թոխաթ), Սեֆյան Իրանից (Ջուղա, Ագուլիս), Կրիմից և այլն:

Մասնագիտություններից հիշատակվում են՝ կոշկակար, ոսկերիչ, ջուլհակ, կերպասագործ, սեկագործ, պասմաճի, ժամկոչ, դերձակ, վաճառական, փականագործ, մշակ, ոսկեբորակի հետ աշխատող մասնագետ, կառուպան, մազման, վերմակ կարող, սափրիչ, մոմճի, ներկարար, մսագործ և այլն: Տնտեսական գործարքներ են կնքվում սննդամթերքի՝ մեղրի, գարեջրի, գինու, նաև կոշկեղենի, մորթեղենի, թրի, թուխների, ձիու և այլի հետ կապված:

Ազգություններից՝ բացի հայերից, արձանագրություններում հանդիպում ենք հրեաների, լեհերի, ռուսիների⁹, հոռոմների (հույների), օլախների¹⁰ (նաև վլախներ կամ վալախներ), ինչպես նաև մահմեդական ազգերի ներկայացուցիչների վերաբերյալ հիշատակություններ: Քանի որ Լեհական թագավորության հայկական դատարանները քննում էին նաև օտարազգիների հայցերը, որոնք առնչվում էին թագավորության հայ բնակչությանը, ուստի Յազլովեցի

⁹ Չլիդրել ռուսների հետ: Հայկական աղբյուրներում հաճախ հանդիպող էրնոնիմ է: Պատմական ռուսիները արևելալավոնական ծագում ունեցող ժողովուրդ էին, որոնց նույնականությունը հիմնված էր առաջին հերթին կրոնի՝ ուղղափառության և ոչ թե ազգության: Խորհրդային պատմագրությունը «ռուսին» էրնոնիմը վերագրել է գլխավորապես ուկրաինացիներին:

¹⁰ Վալախիա պատմական մարզի ժողովուրդների անունը: Հայկական աղբյուրներում առավել հաճախ հանդիպում է «օլախ» տարբերակը: Հետաքրքրական է ՄՄ 1527 ձեռագրի հիշատակարանը, որտեղ «օլախ» և «վլախ» տարբերակները համարժեք են և միասին են հանդես գալիս, մասնավորապես Հովհաննես արհեստակարար ներկայացվում է որպես նախ «ԸՌսաց եւ Ալախաց» աշխարհի, ապա «[ԸՌ]սաց աշխարհի եւ Վալախաց» հայոց արհեստակարար, տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմեցին Օ. Եգանեան, իսրազգությամբ Յ. Քեռէկեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քհյ. Հայրապետյանի, ցանկերը կազմեց՝ Վ. Գեւորգեանը, Երևան 2009, էջ 333-334: Հայ իրականության մեջ էրնոնիմը վերագրվում է մոլդավացիներին (տե՛ս Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, 2-րդ բարեփոխված հրատարակություն, Երևան 2009, էջ 823) և ռուսիներին (տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Երևան 1985, էջ 229):

դատական արձանագրություններում հանդիպում ենք վերոնշյալ օտարազգիների մասին հիշատակություններ: Հատկապես մեծ թիվ են կազմում հրեաների հայցերը:

Արձանագրություններում հանդիպում ենք նաև կտրիճների եղբայրության անդամների վերաբերյալ տեղեկություններ:

Կառուցվածքը

Արձանագրությունների կառուցվածքը գրեթե միանման է: Որպես կանոն, տրված է տարեթիվը, ամսաթիվը, հաճախ նաև շաբաթվա օրը, ապա նշված է նիստին նախագահող վոյթի¹¹ համայնքի առաջնորդի անունը, որը նաև համայնքի դատական իշխանության գործառույթ էր իրականացնում: Երբեմն հիշատակվում են նաև լեհ բարձրաստիճան պաշտոնյաների անուններ: Հայ վոյթի հետ միասին հաճախ տրված են դատական նիստին մասնակցած ավագանու անդամների՝ աղաների անունները, այդ թվում նաև երեսփոխանի գործառույթը իրականացնող անձի անունը: Որոշ արձանագրություններում հանդիպում ենք համայնքի հոգևոր իշխանության ներկայացուցիչների անուններ, օրինակ՝ եպիսկոպոսի, դատական գրագիրների: Այնուհետև շարադրվում է բուն գործը: Դատարան դիմած անձը ներկայացնում է իր հայցը: Ապա ներկայացվում է հայցվորի պատասխանը: Վերջում տրված է վոյթի որոշումը: Բոլոր կողմերի ելույթները տրված են ուղղակի խոսքով, ինչը կարևոր նյութ է լեզվաբանների համար, քանի որ դա 17-րդ դարի երկրորդ կեսի Յազուվեցի հայության խոսակցական լեզուն է: Արձանագրությունների վերջին էջերում կան ցուցակներ՝ համայնքային գանձանակին գումար տրամադրած անձանց անունների և գումարի չափի վերաբերյալ:

Լեզուն

Արձանագրությունները գրված են մի քանի լեզվով՝ հայերեն, լեհերենից, լատիներենից և արևելյան ծագման բառերի փոխառություններով, հայատառ լեհերեն, հայատառ ղփչաղերեն, հայատառ լատիներեն, լեհերեն և լատիներեն: Գրությունների գերակշռող մասը հայատառ լեհերենով է: Սա մեզ հայտնի

¹¹ Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան..., էջ 740:

Թերևս առաջին աղբյուրն է, որը պարունակում է այսքան մեծ թվով հայատառ Լեհերեն գրություններ: Լեզուների այս զանազանությունը շատ բնորոշ էր Լեհ-լիտվական թագավորության հայ համայնքին առհասարակ, այդ թվում նաև Յագլովեցի հայությանը:

Ստորև ներկայացնում ենք հայերեն մի արձանագրության օրինակ՝ օտար լեզուներից փոխառնված բազմաթիվ բառերով ու կից բառարանով: Ինչպես սովյալ օրինակում, այնպես էլ առհասարակ բոլոր արձանագրություններում մեծ թիվ են կազմում հատկապես բայական հարադրությունները, որոնց բաղադրիչներից մեկը, որպես կանոն, հայերեն բայ է: Հաճախ այդ հարադրությունները բաղկացած են երկու բայերից, ընդ որում, հարադիր բաղադրիչը օտար ծագման բառ է, իսկ հարադրյալը՝ հայկական ծագման (տե՛ս ստորև կցված բնագիրը):

Բնագիր

«ԹՎ ՌՂԷ. փետրվար ԻԴ., օրն Դ-շաբթի:

Արջև սլավեղնը բան Մարտիրոս վոյթիին սղանուլըը բերսօնալիդեր Մարկոս, որդի Գասթարին տօպրօլօնեէ, եավնեէ, եասնեէ պարտք զէզնադ արաւ Նիկօղօս երեսփոխանին սումայ հինգ հարիւր ու քստսուն զօլօթի բօլսքի հէսէպօլ, ամէն զօլօթի երսունակլանլ հրօշ, որն որ այս սումային զաբխատդ արաւ զտունը գրաւ, որ բօմէնեօնը սուման բօվինէն կշլլամ վճարելու նազնաչօնը ատենին, թօյ ետդ աքից Գ. տարի՝ աղանց խօսք, աղանց կալաճի: Երկուսումըն, ես՝ Մարկոս, որդի Գասթարին աղի այս զվըը մեանօվանը զաբխսին վշրայ բան Նիկօղօս երափոխանէն սումայ ԳՃ. զօլօթի բօլսքի հէսէպօլ, ամէն զօլօթի երսունական հրօշ, որ բօմէնեօնը սուման բօվինէն կշլլամ վճարելու վեց րաթայօլ, թօյ ետդ աղջի րաթան Եագլովցայ եարմարքին, ԹՎ ՌՂԸ. այս հէսէպօլն, ամէն տարի յիսունական զօլօթի բօվինէն կշլլամ վճարելու ամէն <տարի> («տարի» բառի վրա արված կետեր, որ բառը ջնջել է) րաթան նազնաչօնը ատենին, նեէ օտխօօնց թօրայէն, պէզ վշէլաքի տիլացիլի աբէլացիի, ոչ մէկ ցեղ ֆանդերով կամ ըոզկօլ, թիլքօ նաղտ ստըկօլ: Թէ որ նազնաչօնը ատենին այս զվշմեանօվանը սուման թօ ետդ 540 զօլօթին օտտադ չանեմ, դէտը բօվինէն կշլլամ տշնէն օտտօմբիդ անելու»¹²:

¹² Յագլովեցի ֆաղափի հայկական դատարանի 1648-1669 թթ. դատական արձանագրությունների մատյան, ԿԱԱ Родн II 165, էջ 3:

Բնագրի թարգմանությունը

«1648 թ. փետրվարի 24, օրն չորեքշաբթի:

Պատվական վոյթ պարոն Մարտիրոսի առջև անձամբ կանգնելով՝ Գասպարի որդի Մարկոսը հոժար կամքով, բացահայտ, պարզորոշ վկայեց, որ Նիկողոս երեսփոխանին պարտք է հինգ հարյուր ու քսոսասուն լեհական զլոտի հաշվով գումար, յուրաքանչյուր զլոտին երեսունական գրոշ, և այս գումարի դիմաց իր տունը գրավ դրեց: Նշված գումարը պարտավորվում էավճարել սահմանված ժամկետում, այսինքն արանից երեք տարի՝ առանց խոսքի ու ավելորդ խոսակցության: Երկրորդ, ես՝ Գասպարի որդի Մարկոս, այս վերոհիշյալ գրության վրա պարոն Նիկողոս երեսփոխանից վերցրել էավ 300 լեհական զլոտի հաշվով գումար, յուրաքանչյուր զլոտին երեսունական գրոշ, որ նշված գումարը պարտավորվում էավճարել վեց մոծումններով, այն է՝ առաջին մոծումը [կատարել] Յազրովեցի՝ 1649 թ. տոնավաճառին, այս հաշվով՝ ամեն տարի հիսունական զլոտի պարտավորվում էավճարել ամեն տարվա մոծումի սահմանված ժամկետին, չեռանալով դատարանից, առանց որևիցե ուշացման և բողոքարկման, ոչ մի տեսակ գրավով կամ ապրանքով, [այլ] միայն կանխիկ դրամով: Թե որ սահմանված ժամկետում այս վերոնշյալ գումարը, այսինքն՝ 540 զլոտին չտամ, ուրեմն պարտավոր կլինեմ տնիցս հրաժարվելու»:

Փոխառյալ բառերի բառարան

սլավէդներ (*slawetny*) – պատվական

բան (*pan*) – պարոն

վոյթ (*wójt*) – համայնքի ավագ, ընտրովի առաջնորդ, գավառապետ

սդանովշը բէրսոնալիդէր (*stanqwszy personaliter*) – անձամբ կանգնելով

սոպրովօլնեէ (*dobrowolnie*) – հոժար կամքով

եավնեէ (*jawnie*) – բացահայտ

եասնեէ (*jasnie*) – պարզորոշ

զէզնագ արաւ (*zeznac* (անորոշ դերբայ) – ցուցմունք տալ, վկայել) –
վկայություն, ցուցմունք տվեց

սուճայ (*suma*) – գումար

բօլսքի (*polski*) – լեհական

հէսէպ¹³ – հաշիվ

¹³ Այստեղից սկսած բառարանի բոլոր այն բառերը, որպես կանոն արևելյան ծագման, որոնց կողմին տրված չեն դրանց գրելաձևերը, աննշան փոփոխություններով հանդիպում են հայերեն բառարաններում, մասնավորապես տե ս Ռ. Մ. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, 2-րդ բարեփոխված հրատարակություն, Երևան 2009:

հրոշ (*grosz*) – դրամական միավոր
 գաբիսադ արաւ (*zapisać* (անորոշ դերբայ) – գրել) – գրեց [հօգուտ]
 բօմենեօնը (*promieniony*) – նշված, հիշատակված
 նազնաչօնը (*naznaczony*) – սահմանված, նշված
 թօյ էսդ (*to jest*) – այսինքն, այն է
 կալաճի – ավելորդ խոսակցություն, զրույց
 զվըշ մեանօվանը (*zwyż mianowany*) – վերը նշված
 գաբիս (*zapis*) – գրություն, արձանագրություն
 բօվինէն կըլլամ (*powinien* – պետք է) – պարտավոր կլինեմ
 րաթայ (*rata*) – վճար, մուծում
 նեէ օտիօծօնց (*nie odchodząc*) – չհեռանալով
 թօրա¹⁴ (*tora*) – օրենք, իրավունք, դատ, դատարան
 պէզ վշէլաքի (*bez wszelaki*) – առանց որևիցե
 տիլացիա (*dylacja*) – ուշացում, հապաղում
 աբելացիա (*apelacja*) – բողոքարկում
 ֆանդ (*fant*) – գրավ
 ըոզակ – ապրանք, ունեցվածք
 թիլքօ (*tylko*) – միայն
 նաղտ – կանխիկ
 օտտադ շանեմ (*oddać* (անորոշ դերբայ) – տալ, հանձնել) – շտամ
 դէտը (*tedy*) – ուրեմն, ուստի, այսպիսով
 օտսդօմբիդ անելու (*odstąpić* (անորոշ դերբայ) – հրաժարվել, հետ կանգնել,
 նահանջել, զիջել) – հրաժարվելու, զիջելու

Կարծում ենք, որ յազլովեցյան դատական արձանագրությունների վերաբերյալ հաղորդած անգամ ընդհանուր բնույթի այս տվյալները վկայում են, թե որքան կարևոր է ամբողջական նյութը գիտական շրջանառության մեջ դնելը: Դրա հիման վրա պիտի կարողանանք վերականգնել 17-րդ դարի երկրորդ կեսի Յազլովեցի հայ համայնքի պատմությունը վերաբերող տարաբնույթ իրողություններ: Հաշվի առնելով աղբյուրի առանձնահատկություն-

¹⁴ Այս եբրայերեն բառը հաճախ է հանդիպում լեհահայերի դատական արձանագրություններում, մասնավորապես ղփչախերեն:

ները՝ չենք կարծում, որ սոսկ բնագրի հրատարակությունը կարող է բավարար համարվել աղբյուրը գիտական շրջանառության մեջ դնելու տեսանկյունից: Հայատառ լեհերենով և հայատառ դիշաղերենով գրված արձանագրությունները թեև ընթեռնելի են լինելու հայ ընթերցողի համար, սակայն անհասկանալի՝ բովանդակության առումով: Հակառակ երևույթը նկատվելու է լեհ ընթերցողի պարագայում. օրինակ, հայատառ լեհերեն արձանագրությունների բնագիր հրատարակության դեպքում, այսինքն՝ բովանդակությունը հասկանալի է լինելու: Նման խնդրի առջև ենք կանգնելու նաև լեհերեն և լատիներեն արձանագրությունների պարագայում: Ինչ վերաբերում է հայերեն արձանագրություններին, ապա վերևում բերված օրինակը վկայում է, որ լեհերենին անձանոթ ընթերցողը դժվարությամբ է ընկալելու այդ արձանագրությունների բովանդակությունը, անգամ հրատարակության հետ նախատեսվող փոխառյալ բառերի բառարանի առկայության պարագայում, մանավանդ, որ յազլովեցյան արձանագրություններում գրեթե չկան զուտ հայերեն, առանց օտար փոխառությունների գրություններ: Ուստի բնագրին կից հայերեն և լեհերեն թարգմանությունները համարում ենք անհրաժեշտություն:

Համոզված ենք, որ աղբյուրի հրատարակումը հետաքրքրություն կառաջացնի հայ և օտարազգի մասնագետների շրջանում՝ նոր մանրամասներ բացահայտելով Լեհ-լիտվական թագավորության տարաբնույթ հարցերով զբաղվող ուսումնասիրողների համար¹⁵:

¹⁵ Լեհաստանում գտնվելու ժամանակ զեկույցով հանդես եկանք հոկտեմբերի 11-ից 14-ը Կրակովում տեղի ունեցած Լեհաստանի պատմությամբ զբաղվող արտասահմանցի գիտնականների 3-րդ միջազգային գիտաժողովում: Բացի այդ, նոյեմբերի 27-ից 29-ը դասախոսությամբ հանդես եկանք Պոզնանի Ադամ Միցկևիչի և Լեշնոյի Յան Ամոս Կոմենսկու անվան համալսարաններում: Օգտվելով ընձեռված առիթներից՝ զեկույցի ամբիոնն օգտագործեցինք գիտական հանրությանը տեղեկացնելու յազլովեցյան նորահայտ աղբյուրի մասին, հատկապես ուշադրություն հրավիրելով հայատառ լեհերեն գրությունների վրա, ինչը, կարծում ենք, կառող է 17-րդ դարի երկրորդ կեսի խոսակցական լեհերենի ուսումնասիրման նյութ հանդիսանալ լեհ լեզվաբանների համար:

Piruz Mnatsakanyan

**THE ARMENIAN COURT REGISTER BOOK OF YAZLOVETS (1648-1669).
NEW-FOUND SOURCE FROM POLAND**

Keywords: The National Archives in Cracow, Polish-Lithuanian Commonwealth, 17th century, Yazlovets, the Armenian Court, Court Register Book, Armenian-Polish and Armenian-Kipchak allographies, Jews.

In this paper, the author describes the major aspects of the Armenian Court Register Book of Yazlovets (1648-1669) in former Polish-Lithuanian Commonwealth, nowadays kept in the National Archives in Cracow (signature Podh II 165), which she had studied during a three-month fellowship programme “Thesaurus Poloniae” (17th edition, September – December 2017) of the Ministry of Culture and National Heritage of Poland.

The Court book, which contains 512 pages, is written in several languages, such as Armenian, with numerous loan-words from Polish and Eastern languages, Armenian-Polish, Armenian-Kipchak and Armenian-Latin allografies, also in Polish and Latin. The Court files are devoted to the civil law of the Armenian Community in Yazlovets with the mention of Armenian and non-Armenian subjects. They are from various cities of the Polish-Lithuanian Commonwealth, of her nearest neighboring countries, also from the Ottoman Empire, especially from the historical Armenian lands, under the Ottoman rule, Iran, Crimea. Besides Armenians, the Court Book contains cases of Jews, Poles, Ruthenians, Vlachs, also representatives of the Islamic religion. As an example, the author cites an Court case written in Armenian, with numerous loan-words, mostly from Polish, and provides its modern Armenian translation along with a Glossary. The author intends to publish this source in Armenian and Polish translations.

ПИРУЗ МНАЦАКАНЯН

**АРМЯНСКАЯ СУДЕБНАЯ КНИГА ЯЗЛОВЦА
(1648-1669). НОВЫЙ ИСТОЧНИК ИЗ ПОЛЬШИ**

Ключевые слова: Национальный архив в Кракове, Речь Посполита, XVII век, Язловец, Армянский Суд, Судебная книга, армяно-польская и армяно-кыпчакская аллография, евреи.


В статье дается предварительное описание регистрационной книги армянского суда Язловца (Речь Посполита, 1648-1669 гг.), в настоящее время хранящейся в Краковском национальном архиве (Podh II 165). Исследование осуществлено благодаря трехмесячной стипендии, выделенной в рамках программы “Thesaurus Poloniae” (17-й выпуск, сентябрь - декабрь 2017) Министерства культуры и национального наследия Польши.

Судебная книга, содержащая 512 страниц, написана на нескольких языках: на армянском, с многочисленными заимствованиями из польского и восточных языков, армяно-польскими, армяно-кыпчакским и армяно-латинским аллографами, а также на польском и латыни. Сборник содержит гражданские правовые акты армянской общины Язловца, в которых упоминаются множество лиц различного гражданского состояния и национальностей. Это подданные Речи Посполитой и иностранцы, жители ближних стран, но и Османской империи, Ирана, Крыма и собственно Армении; помимо армян, в Судебной книге часто упоминаются евреи, а также поляки, русины, влахи и представители мусульманских народов. В качестве образца разбирается один из актов суда, показываются многочисленные заимствования из польского и других языков. Текст акта снабжен глоссарием и армянским переводом.

ՓԵՐՈՒՉ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՅԱԶԼՈՎԵՑ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 1648-1669 ԹԹ.


ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆԸ. ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻ ԱՂԲՅՈՒՐ ԼԵՀԱՍՏԱՆԻՑ




Նկ. 1 Յազլովեցի ֆաբրիկը: Աղբյուրը՝ «Հայերը Լեհական թագավորությունում և Լիտվական Մեծ իշխանությունում XIV-XVIII դարերում»: Հեղինակներ՝ Աննի Լայպիտական ռադոնափոխությունների զարգացման և աշակցման հիմնադրամ, Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամ՝ Լեհաստանի Մշակույթի և ազգային ժառանգության նախարարության աշակցությամբ:



Նկ. 2 Յազլովեցի հայկական դատական արձանագրությունների մատյանը, ԿԱԿ ՔՈԾԻ II 165



Նկ. 3 Լուսադրոշ, Կևա Podh II 165



Նկ. 4 Հայերեն արձանագրություն, ԿԱՊՈԾԻ II 165, էջ 93



Նկ. 5 Հայաստանի փչաղերեն արձանագրություն, ԿԱՊՈԾԻ II 165, էջ 229